

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2002թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1418.7 հազ. մարդ, որից 90.3 %-ը կամ 1281.6 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 9.7%-ը կամ 137.1 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2002թ. ապրիլի վերջին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 160.5 հազ. աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.2%-ը կամ 159.2 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 85.4%-ը կամ 136.0 հազ. մարդ:

2002թ. ապրիլին վերը նշված ծառայության կողմից հաշվառման է վերցվել 2.3 հազ. մարդ, որից 1.7 հազ.-ը կամ 73.9%-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 2.6 հազ. մարդ, որից 26.9%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2002թ. ապրիլին¹

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%- ու՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ
Ընդամենը ՀՀ	160.5	91.5	136.0	90.2
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.3	104.5	1.5	93.8
Արարատ	7.3	89.0	6.0	90.9
Արմավիր	8.9	77.4	6.5	73.9
Գեղարքունիք	8.8	84.6	6.5	87.8
Լոռի	24.7	99.2	21.0	97.7
Կոտայք	10.2	73.4	7.9	73.1
Շիրակ	33.7	101.2	29.1	99.0
Սյունիք	16.5	103.1	13.8	100.0
Վայոց ձոր	2.1	100.0	1.7	94.4
Տավուշ	4.6	88.5	4.0	87.0
ք.Երևան	41.4	86.6	38.0	85.6

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 66.1%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2001թ. ապրիլի նկատմամբ աճել է 1.1 տոկոսային կետով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2002թ. ապրիլի վերջին կազմել է 846 մարդ, այդ թվում՝ 78.7%-ը կամ 666-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով: 2002թ. ապրիլին զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 653 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 188 չզբաղված մարդ: Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2002թ. ապրիլին կազմել է 6.5 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3245 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2002թ. ապրիլին կազմել է 9.6% և 2002թ. մարտի համեմատությամբ մնացել է նույն մակարդակի վրա, իսկ 2001թ. ապրիլի նկատմամբ նվազել 1.0 տոկոսային կետով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով: